

ՏԱՍՆԵՐԱՐԳ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան դիմ 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Աւանդին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից ամբողջատան մէջ:

Օտարաբարարացիք յիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար. գնալով են
խրատնայի րոտին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Հարկաւոր է մի բարեգործական ընկերութիւն:
— ՆԵՐՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ, ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐՈՒՆ:
ԱՐՏԱՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ, ՎՄԱՐԻՆ ԼՐԱԳՐԻ ԹԵՂ-
ԹԱԿԵՐԹԻՒՆ: — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Նամակ
Թիֆլիսից:

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ԲԱՐԵԳՈՐԴ- ԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մեր Ս. Պետերբուրգի թղթ-
թաղիցը հաղորդում է մեզ որ
բազմաթիւ հայ երիտասարդներ
սկսեցին այժմ սովորել գեղար-
ուեստ՝ երաժշտութիւն, նկար-
չութիւն, երգեցողութիւն, բեմա-
կան արհեստ, նոյնպէս հայ օ-
րիորդները սկսեցին ուսումնասի-
րել բժշկութիւնը: Թղթաւիցը
աւելացնում է որ այդ բոլոր ու-
սանդները և ուսանողուհիները
շատ աղքատ մարդիկ են:

Ահա այդ ծախում է այն պարզ
հարցը. արդեօք մենք, կովկա-
սեան հայերս, չենք կարող կազ-
մել Թիֆլիսում մի բարեգործա-
կան ընկերութիւն, որի նպատա-
կը լինի ուսում տարածել, պահ-
պանել մեր նիւթական օժանդա-
կութեամբ մայրաքաղաքներում

ուսում տալու հայ երիտասարդ-
ներին և օրիորդներին, պահել մեր
հաշուով տարին գոնէ երկու, ե-
րեք, չորս հոգի ստիպելով իրենք
հայ չքաւոր երիտասարդներից
կամ օրիորդներից:

Միթէ այդ տեսակ համեստ
պրօգրամայով դժուար է կազմել
մի ընկերութիւն, որի կանոնադ-
րութիւնը շատ հասարակ և
պարզ կը լինէր և որ նիւթական
շատ մեծ միջոցների կարօտ չէր
լինի:

Բայց ոչ. մենք հայերս մի
զարմանալի բնաւորութիւն ու-
նենք: Մենք կամ ոչինչ չենք
անում, կատարելապէս անտարբեր
ենք մնում դէպի ամեն առաջա-
դիմական երեւոյթները մեր ազգի
մէջ, — կամ եթէ ձեռնամուխ ենք
լինում մի գործին, չենք բաւա-
կանանում մի որ և է համեստ,
պարզ և նպատակայարմար ըն-
կերական կազմակերպութեամբ,
այլ կամենում ենք անպատճառ
հիմնել մի այնպիսի ընդարձակ,
բաղադրեալ հիմնարկութիւն, ու-
րով ամբողջ աշխարհը կարողա-
նայինք զարմացնել, բայց որը
նոյն իսկ իր չափից դուրս մեծ,

բաղադրեալ և ընդարձակ լինելու
պատճառով անկարող ենք իրա-
գործել, նախ ընդունակ մարդ-
կանց պակասութեան պատճա-
ռով և երկրորդ ու զինաւորապէս
այն պատճառով որ մենք սովոր-
ութիւն ունենք ոչինչ չը շինե-
լուց, կատարեալ անգործութիւնից
անցնել յանկարծակի և մէկ ան-
գամով դէպի շատ լայն և ընդար-
ձակ գործերը, փոխանակ նախ
և առաջ ձեռք տալ փոքրիկ,
համեստ, նպատակայարմար և
օրական, կենսական ամենաան-
հրաժեշտ պահանջներից բղիտ
ձեռնարկութիւններին:

Հայը կամ ոչինչ չէ անում,
կամ եթէ անում է մի գործ,
չէ բաւականանում մի համեստ
ձեռնարկութեամբ, այլ մի ան-
գամից պէտք է այնպիսի մի
գործին, ձեռք տալ, որ ամենքին
զարմացնէ...

Եթէ հայի գլխաւոր նպատա-
կը լինէր որ սկսած գործը աջող-
վի և այնուհետեւ փոքր առ
փոքր, պահանջման համեմատ,
զարգանայ և ընդարձակվի, — նա
անշուշտ կը սկսէր փոքր, պարզ,
սահմանափակ, համեստ և նպա-

տակայարմար գործից: Բայց նրա
նպատակը չէ գործը նոյն իսկ գործի
համար. նրա նպատակն է հռչակել,
իսկոյն մեծ, երեւելի մարդ դառնալ,
գոնէ քանի մի օր շարունակ ա-
ռաջին դերը խաղալ հասարակու-
թեան մէջ:

Իսկ այնուհետեւ, եթէ մի քա-
նի շարաթից յետոյ, գործը
քանգվի, — փոյթ չէ հայի հա-
մար, նա գոհ է որ հռչակվեցաւ.
«ես անմահացրի իմ անունս, ա-
սում է նա փրկելով իր ընկեր-
ների շրջանում, իսկ եթէ գործը
չի աջողվի, դա իմ մեղաւորու-
թիւնս չէ. մենք մարդ չունենք
և հասարակութիւնը անընդու-
նակ եղաւ շարունակել և տանել
իմ հիմնած գործը»:

Ոչինչ գործ կատարված չէ
այդպիսով, բայց հայը գոհ է,
որ բազմական կերպով դեր է
խաղացել:

Բայց եթէ գործ սկսվէր փոքր,
համեստ, պարզ և անկեղծ կեր-
պով, ճշմարիտ աշխատելով
և ոչ թէ հռչակելու ցանկու-
թեամբ, — գործը կաջողվէր:

Հայը չէ կարող անյայ-
տ ու թեան մէջ համեստու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՆԻՍՏԻՑ

Կ. Պոլսի, 19 ապրիլի

Քանի որ Կ. Պոլսի և Կովկասի հայոց մէջ
կան յարաբերութիւնք, այնքան ևս կը շատանա
թղթակիցներու պարտականութիւնները: Ընթեր-
ցողը նոր հետաքրքրութիւններ, նոր պահանջ-
ներ կուենան և ինչ որ երեկ գիտէիք կը գո-
հացնէր, այսօր դժգոհ կընէ: Ի՞նչ կրնանք ըսել,
յառաջդիմութեան բնական օրէնքն է այս: — Ան-
ցեալ օր Տիֆլիսէն պ. Խաչան Մեղրիկ կը գրէր
«Մասիս» — «Ռուսաստանի հայերը այժմ էլ լաւ
չեն ճանաչում իրանց տաճկաստանցի եղբայրը
գրութիւնը: Կ. Պոլսից մեր լրագիրներին թղթակ-
ցողները միանգամ ժողովրդի դրութեան մասին
մի բան չը գրեցին. ուստի և մենք չենք ճանա-
չում ձեզ ինչպէս հարկն է նախ հարկաւոր է
Տիֆլիսը և Կ. Պոլսը միմեանց լաւ ճանաչել, և
այդ իբրեւ ազգի մասուր կիսործներ, սկսեն
միմեանց օգնել, միմեանց ցաւերը հոգալ:» — Պ.
Մեղրիկ կուգէ որ Կ. Պոլսի ժողովրդի կացու-
թիւնը լիովին ձեզ ծանօթացնենք և կարծիք
կովկասի հայոց փափագն ալ այդ է: Թերեւս այս
պահանջը ամենէն աւելի «Մշակ»-էն ըսին և պ.
Մեղրիկի անխաղաղութիւնները ամենէն աւելի մեզ
կը պատկանին, վասն զի Կովկասի մէջ միայն
«Մշակ» է որ շարունակ երեք տարի ալ և նոյն
անձէ թղթակցութիւն կը հրատարակէ, ուստի
պակասութիւններն ալ մի և նոյն անձին կը վե-
րաբերին: Մենք ալ գիտենք թէ, որչափ թերի
կողմեր ունին մեր թղթակցութիւնները և երբեմն
փափագ յայտնեցինք, որ «Մշակ» մի քանի թղթ-
թաղիցներ ունենայ Կ. Պոլսի, որք զանազան
ճիւղեր ընդգրծ ըլլալով, անոնց վրայ գրեն, ա-

կայն մեր փափաղը փափաղ մնաց, թէպէտ Կ.
Պոլսի գրիչ շարքերը կարող անձինք շատ են:
Մենք մեզ նիւթ ընտրած ենք ազգային քաղա-
քական գործոց չըջանալը և կը քանակ
այդ չըջանալէն որչափ հնար է դուրս չեղել:
Սակայն միտ կողմանէ լաւ հասկցած ենք թէ
որչափ կարեւոր է որ Կովկասի հայերը մեր վրայ
ընդարձակ տեղեկութիւններ տնենան: Կ. Պոլսի
Հայաստանի մէկ մանրանկարն է. Հայաստանի
ամեն գաւառն է ամեն ատիճանէ անձինք լե-
ցեաւած են ի Կ. Պոլսի, շատ և շատ օգտակար է
տեսնել յաճախ դաստիարակ, ամենուրեք գաւառի և
ժողովրդի կացութեան վրայ պէտք եղած տեղե-
կութիւնները ստանալ և հաղորդել, զի առանց
ստույգ տեղեկութեանց ինչպէս կրնանք գործել:
— Արդ մեր համոզումն է, որ այս դաստիարակ ճիւ-
ղերն ալ, ինչպէս ըսինք, իրենց առանձին թղթ-
թաղիցները ունենան, և մի և նոյն անձը չըլլայ
քաղաքական խնդրոց, ռուսամեկան խնդրոց,
սոստիստիկական խնդրոց, քարոյշական խնդրոց
վրայ գրողն, բայց երբ տեսնենք որ դժբաղդա-
բար մեր փափագն անգործադրելի պիտի մնայ,
այն ատեն պիտի ստիպուինք այդ աշխատու-
թիւններն ալ մեր վրայ առնուլ. բայց այս ալ
շուտով չը կրնար ըլլալ. վասն զի պէտք է որ
մեր ժամանակի տէրն ըլլանք, որպէս զի տեսնե-
լու, խորհելու և գրելու միջոց ըլլայ. ուստի երբ
մեզ յաջողի մեր ժամանակին տէրն ըլլալ, որով
հետամուտ ենք, այն ատեն կընդարձակենք մեր
աշխատութեանց չըջանալը:
Իսկ կը սպասենք մեր թերթներու մէջ ալ տես-
նել Տիֆլիսէն թղթակցութիւնները: Արգոսի աչ-
քերն երկուք ազգային: Մասիսի «Ռուսաստան»
ցիւնը և այժմ պ. Խաչան Մեղրիկ յուսանք թէ
անոր պակասը լրացնէ:
Պ. (?) Օ. Ն. Կրեմն Կրեմն Կրեմն Կրեմն
Ե. Տիֆլիսի չըջաղաղութիւն մը ընել կուտայ մեզ,
անձերն ալ իրեն մեզ ծանօթացնելու կը մօտեց-
նէ, և կէս ճամբան կը թողու: — Իմէն ամիսը

մի քանի նասակ անործելի պիտի ըլլայ: — Ան-
ցեալներն ալ ուրիշ պարսն մը Երևանէն «Մասի-
սի» մէջ կը տեսնուին և պօռնեցող պաշտոն
ռուսաստանցի մի քանի կուսակցի փոքր կուզէ,
եթէ չը փչնց, գէթ զանոնք հայմանդամ ըրաւ:
Վաշխառու և քուրմ բառերն բերնէ բերան
պտտեցան: Բարձրագոյն վարժարանը՝ դր մի
քանի տարի առաջ Վ. Երեմիայի անունը վրայ պի-
տի տեսնելը, իցէ թէ Հայաստանի մէկ ան-
կիւնը իբր պարզ վարժարան մը հաստատուէր և
հայ ազգին անմահ բարբարոս քուրմի սա-
տանակ վարկը քիչ շատ չափէր:

Երբ այս նամակ հասնի, անշուշտ մեր յարգե-
լի բարեկամ պ. Գր. Նիկողոսեանի երէկ գրած
նամակը «Մշակ» մէջ տպուած կըլլայ. մեր բա-
րեկամը ցնցողական լուրերու մասին անխաղա-
թիւններ կընէ: Ի՞նչ ընենք, եթէ լուրերը ցն-
ցողական են, կամ քնարեր, անշուշտ մեղաւորը
դայն հաղորդողը չէ, իսկ եթէ լուր չէ, ուղիւ
նոր հաղորդէնք, այդ ուրիշ խնդրի Տիֆլիսը տես-
նող բարեկամներս ինձ խրատ կուտային, որ զոյժ
կենամ երկար խորհրդածութիւններէ. այժմ ալ
այլք կըսեն թէ լուրեր տալէ զոյժ կենանք: Պ.
Նիկողոսեան լաւ գիտէ որ ազգային քաղաքա-
կան խնդրոց վրայ գրելն ինձ ճիւղ ընտրած եմ:
Երբ Սան-Ստեփանովի և Երեւանի զանազակներն
ստորագրուեցան, հայկական հարցը, և մօտէն ու
հեռուէն զարա վերաբերող պարագայներն, այն-
քան կարեւորութիւն ստացան և ազգին ուշադրու-
թիւնը գրաւեցին և միշտ գրաւած են, որ այն
միջոցին ելլել տնտեսադատական և դատարա-
կութեան խնդրոց մասին Կ. Պոլսէն «Մշակ»
նամակ իրելին միջնադարեան սքոլաստիքական
փիլիսոփայի մը գաղափարը պիտի տար գործին
վրայ: Երբոքս պատրիարքի ձեռնարկութեանց
մասին տեղեկութիւն չը հաղորդելն օգտակար
չենք տեսնել. եթէ պատրիարքի քաղաքականու-
թիւնը լաւ է, պէտք է որ ազգային կարծիքը ի-
րեն նեցուկ ըլլայ. ազգային կարծիքը Ազգ. ժո-

ղովոյ և մամուլ միջոցաւ կրնայ յայտնուիլ, եթէ
ասոնք լուին, ով պիտի խօսի: Որ մը միթէ չը
լսեցինք որ Վէյսարդ կը յայտարարէր թէ պատ-
րիարքը իրեն կարծիքն էր որ կը յայտնել
և ոչ թէ ազգին, և այս կասկածը միթէ իրաւա-
ցի պիտի չը լինէր թէ մամուլը լուր: Քանի որ
Հայաստանի ինքնավարութեան կամ բարեկար-
գութեան խնդիրն օրուան հարցն է հայոց համար,
ամեն տեսակեանքով այդ խնդրոյն վրա խօսելն
և տեղեկութիւն հաղորդելն օգտակար է: «Սրբե-
կան Մամուլ» պ. Շանուրը, որ իրականութիւնը
երեւակայութեամբ համեմուտ սովոր է, ընու-
թիւնը զինքը այսպէս օժտեր է, կը գրէ թէ կը
գտնուին թղթակիցներ որք ազգային դիւանագի-
տական գաղափարներ ի վեր կը հանեն: — Մենք
գեւա հրապարակի վրա ազգային դիւանագիտա-
կան գաղափար մը յայտնուած չը տեսնէք.
Ինչ որ գրուած է, կրնայ ըլլալ որ շատերուն չը
գիտցածը ըլլայ, բայց Բ. Գլան չուրջը զեղբորդ-
ները գիտեն որ ամեն ինչ կառավարութեան
ծանօթ է, ինչ որ կըլլայ անմիջապէս նա կիմա-
նայ. արդ երբ կառավարութիւնը գիտէ, ժողո-
վուրդէն ինչու գաղափար մնայ. եթէ գաղափար մը
նալը փափագող մը կայ այդ ալ թիւրք իշխա-
նութիւնն է: Իսկ թէ տաճկաց միտքը բան կը
ձգեն թղթակիցները, այս նոր է. չարութեան
մասին, ազգ մը փճացնելու նկատմամբ թիւրքե-
րը մեզ ազգի դատաւարութիւններ կրնան ընել.
Թրքաց յատակադիւնեւ համար, գէթ ինչ որ
«Մշակ» մէջ հրատարակուած է ուղղակի կամ
անուղղակի կերպով կառավարական չըջանալ-
ներէ լուած է: Միթէ ոճիւր է մեր թշնամույն
խորհուրդները ջանալ որչափ հնար է ազգին
յայտնել: Այս ոճով թղթակցութիւն ընողները
Կ. Պոլսի վարդէ անկողններու մէջ չեն պառ-
կել, բայց քիչ շատ պարտականութիւն մը կա-
տարելու համոզումը վտանգի կարեւորութիւն ըն-
ծայել չը տար իրենց:
«Մշակ» Կ. Պոլսէն թղթակցութեանց մասին

Թեամբ, տոկոնութեամբ, տարիներով, ա մ ր ո ղ ի Կ Ե ան ք ն աշխատելու. նա կամ ոչինչ չը պիտի անէ, կատարելապէս անգործ մնայ, կամ մի անգամից հրապարակ դուրս գայ և բարձրաձայն կանչի. «տեսէք, ես ինչ մեծ մարդ եմ»:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ձերպայելից մեզ գրում են: «Արարս գետի ափերում, Օլթան անուանեալ դաշտերում յայտնվեցաւ որ անցեալ աշնան մարտիս բաւական ձու էր գրել: Այս ձմեռվայ ընթացքում կառավարութեան հրամանով Արարս գետի ափերում ընտելիւող հայերից և թուրքերից իւրաքանչիւր տունը պարտաւորեալ ըրեալ էր մարտիս սերմից մի մի պուրդ և պուրդից 15 կոպ. էր ստանում: Այդպիսով մարտիս սերմի բաւական մեծ քանակութիւն յանձնվեցաւ կառավարութեանը, որ փոստի էր փորել տալիս և այլու էր մարտիս ձուերը: Այժմ, երբ դարձեալ բացվեց, կրկին յայտնվեցաւ դեռ չը թեւաւորեալ մարտիս նոյն Օլթան դաշտերում: Գարձեալ կառավարութեան հրամանով հայ և թուրք ընտելիւողները գնում են այժմ Օլթան դաշտերը և կտորում են հացի թնամի միջատներին: Բնակիչների այդ եռանդը գովելի է, բայց տիրաւորն այն է, որ ինչպէս ասում են, մարտիս անսպաս աղբիւրը հարկան Պարսկաստան է, որտեղից նա անդադար գալիս է, ինչքան էլ մենք կտորէինք նրան մեր դաշտերում: Իսկ Պարսկաստանում մարտիս չեն կտորում: Երբ մի քանի ժամանակից յետոյ վնասակար միջատը կը թեւաւորվի, նա կանցնի Արաքսի վրայով և կրկին իր աւերիչ արշաւանքը կը գործի մեր դաշտերի վրայ: Այդ գիտածով մարդս ակոմայ յիշում է այն անհրաժեշտ ճանապարհները, որ երբ մի աղբ, մի ժողովուրդ հասնում է ինքնաձանաչութեանը, իսկ այդ ժողովուրդի հարկան աղբը մնում է դեռ իր առաջվայ անապրբերեան ու անպրբերեան մէջ, առաջինը արած ըլլալ ջանքերը շատ անգամ կատարելապէս անարդիւն են լինում յետագայ հարկան անապրբութեան և անապրբութեան չը նորոգել:

Ստացանք Կ. Պոլսից, պ. Գէորգ Թովմալանցից 10 բուրլ յօդուտ այն գումարի, որ կադրուել է «Մշակի» խմբագրութեան մէջ պ. Եսայի:

Քիչ մը երկար գրեցինք այսօր. անշուշտ մեզ ներքին էր գէթ միանգամ ուղղակի տեսակցութիւն մը ընել ընթերցողաց հետ և խորհրդը պարզել: Մինչև այժմ հետեւած ուղղութեամբ պիտի շարունակենք թղթակցութիւնները, ջանալով որչափ հնար է ուրիշ նիւթերու վրայ ալ տեղեկութիւններ տալ, սպասելով որ մեր ժամանակին տէրն ըլլալուց որպէս զի Կովկասի հայերն գոհացնելու թրեւն կարող ըլլանք: Սակայն և թէ պ. Խաչան Մեղրիկ, պ. Նիկողոսեան և Կովկասի կարծեաց թարգման հանդիսացող այլ պարտաւոր անմիջապէս ուրիշ ուղղութեամբ թղթակցութեանց կը ցանկան «Մշակի» համար, դժուար չէ Կ. Պոլսոյ գրագէտներէն, որոց դասին պատկանելու պատիւը չենք ունեցած, ինչպէս մեր գրութիւններէն կրկին, զոտնէ շատեր որ իրենց փափաքը լաւ կերպով գոհացնեն, և մեք մեր երեք տարիներու Կովկասեան եղբայր հետ ըրած բարեկամութիւններս բաւական համարելով, այն ատեն կըսենք մեր միտք բարոյ վր:

Անցեալ նամակով գրեցինք թէ Թրոթթըր հաղարարութիւն և պ. Գ. Նիկողոսեանի տեսակցութեան վրայ պիտի խօսենք. երկու անգամ է այս մասին գրածս ձախորդ պարագայով ետ մնացին:

Վերջին պատերազմի ժամանակ պ. Թրոթթըր և պ. Գ. Նիկողոսեան զիարք ճանչցած են ի շայտտան, երկուքն ալ անդ պանդուխտ, եթէ երբեք հայ մը շայտտանի մէջ պանդուխտ կըրնայ սեպուրի. երկար ատեն վերջը զերար Կ. Պոլսի կը գտնեն անյուսակի կերպով և բնական է որ բարեկամութիւնը աւելի քաղցրանայ: Պ. Նիկողոսեան ինքն է որ նախ այցելութիւնը կուտայ և տեսակցութիւնը 2 1/2 ժամ կը տեւէ:

Թրոթթըր.— Ա՛յ, հազար բարեաւ. վաղեմի բարեկամ, որ տեղէն որ տեղ:

Նիկող.— Պետերբուրգէն կուգամ, իսկ դուք է հարկէ Անգղիայէն կը վերադառնաք և կրկին

դուքանի առաջարկութեամբ մի մշտական թղթակցի արտասանմանով պահելու համար:

Գէորգ վարդապետ Ստրենեանց խորհում է մեզ յայտնել, որ նա ձեռնամուխ է եղել թարգմանել հետեւեալ հեղինակութիւնները: 1) Յաւիտեական կեանք, հրապարակական դասախոսութիւն իրնէստ Նազիլի. 2) Յիսուս Գրիստոսի կեանքի և գործերի նկարագիրը, անգլիացի անյայտ հեղինակ (Ecce homo). Գրադատների կրթական յօդուածով:

Մեզ խորհում են յայտնել հետեւեալը: «Ձեր լրագիրը ծանօթացրեց մեզ սովորեալ ամառ չհասնողութիւնը բժշկող պ. Մարտիրոս Հախնազարեանի հետ, նոյնպէս և աչքացաւ բժշկող մի պարսիկի հետ, այժմ պէտք է այդ երկու պարսիկներն աւելացնել Գրիգոր Յակոբեանցին, որ իր մի գտած դեղով առողջացնում է ամենակարճ ժամանակում առ ա մի անգամ, որի չարչարանքը շատերը փորձած են: Պարոնը հաւաքարքի է և բնակվում է Հաւարաբի Պոկրոփսկայա զինուորանոցի մօտ»:

Իր № 73-ի առաջնորդող յօդուածի մէջ «Մեղու Հայաստանի» լրագիրը հետեւեալ քարոզ է կարդում ուրիշների գլխին: «Ինչ կարիք ու չափ կայ մարդը մասն աւուր կեանքը հանդէս բերել, միջոցաւ հասարակական գործունէութիւն է միայն նոյն քննիչը, դատաւարութիւն ու վարձատրողը: Միտաւոր հաշիւները կարելի է տեսնել ուրիշ տեղ և ոչ մասուր շինել կրքի ասպարէզ և այս սրբութիւնն էլ պղծել անտուրը ձեռքերով: Այդ իրաւացի խօսքերով «Մեղու Հայաստանի» լրագիրը ինքն անխնայ դատաւարութեամբ է իր սեփական ամբողջ անցեալը:

Մեզ գրում են Ս. Պետերբուրգից. «Մինչև այժմ հայ երիտասարդութիւնը լցնում են միայն համալսարանները և տեխնիկական բարձրագոյն դպրոցները, բայց մի քանի ժամանակից հայ երիտասարդներն ու օրիւնքները սկսել են ուսումնաւորել և գեղարուեստները: Ս. Պետերբուրգում կան այժմ մի քանի տաղանդաւոր հայ երիտասարդներ, որոնք սովորում են նկարչութիւնը, նոյնպէս երաժշտական կոնսերվատորիայի մէջ կան մեր հայրենակիցները մի քանի օրիւնքներ և երիտասարդներ, որոնք յայտնում են իրանց առանձին ընդունակութիւնը երգչութեան և երաժշտութեան մէջ: Մի կրկնցի հայ աշակերտներ, որ երեցեցութիւն է սովորում վարձպատկերի վկայութեամբ դառնալու է անապաճառ նշանաւոր երգիչ, մի այլ կրկնցի հայ օրիւնք յայտնում է իր տաղանդը սովորելով կոնսերվատորիայի դրամատիկական բաժնում: Կան մի քանի մեծ ժառանգիր կրկնցի և բնասարբիայի հայ օրիւնքներ բժշկական կուրսերում: Յաւելին այն է որ այդ բոլոր պարոններն ու օրիւնքները շատ աղքատ անձինք են»:

Ս. Պետերբուրգից մեզ գրում են հետեւեալը:

Կուղիտուրէք ձեր տեղը Արմէն... բայց ո՛չ, ներողութիւն՝ Գիրգիտաւ...

Թրոթթըր.— (կը ժպտի և կըսէ). ո՛, դուք ինձ ծանր անհարկութիւններ կընէք. հաւատաւոր եմ ինձ որ en gentilhomme, ես զիս միշտ հայ ժողովրդի շահերուն ծառայած եմ համարած, այլ ոչ քերդերուն:

Նիկող.— Կատու կընեմ, մանաւանդ որ իմ անհարկութիւնը կը վերաբերի ոչ այն պ. Թրոթթըրին, որ աղաւաղաբար (Անգղիայի ընդհանուր հիւպատոսն է Հայաստանի մէջ, այլ այն պ. Թրոթթըրին որ ստորագրուած էր Բիկոնսֆիլդի պաշտօնակցութեան:

(Մտեմական դիրք կը բռնէ և կը շարունակէ խօսակցութիւնը):

Թրոթթըր.— Ի՛նչ նորութիւն է Պետերբուրգ: Նիկող.— Բաւական ատեն է արդէն Պետերբուրգ թողուլու, իսկ այժմեան նորութիւնները մի և նոյն լրագիրներէն կ'իմանանք:

Թրոթթըր.— (ժպտելով).— Իսկ ռուսահայերէն ինչ նորութիւն.

Նիկող.— Ռուսահայերը իրենց յոյսը դնելով իրենց այնչափ համակրող Ռուսիոյ տէրութեան և նմանապէս ազատամիտ Անգլիայի վրայ, շատ սիրով իմացան ձեր Անգլիա երթալը. որով առիթի կուշնկայիք թարգման ու ինամատար հանդիսանալ նոյն հայրենակիցներուն թիւերին ունեցած վիճակին:

Թրոթթըր (ձայն հաւաչելով).— անձ, սիրելի իմ պարոն, ինչ ընենք մենք, որ այս տխմար մարդիկ (թիւրքերը) չեն ուղեր հասկանալ իրենց սեփական շահերը, այլ փոխանակ մտերմ խաղացնելու, աւելի եւ կը վրդովեն զգրեւոր իշխանական կրօնաւորութիւնը ձեր հայրենակիցներուն դէմ ի Հայաստան:

Նիկող.— Կարծեմ որ Թիւրքիայի վերջը շատ հեռու չէ:

Թրոթթըր.— Եթէ ոչ վերջը, գոնէ հեռու չէ վերջի սկիզբը...

«Մարտի 1-ի սարսափելի եղեռնագործութեան պատճառով եղան թէ Մոսկիայի և թէ Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիներում հոգեհանգիստներ, կատարվեցան նոյնպէս և նոր Թագաւորի համար մաղթանքներ, բայց կենդանի խօսք, քարոզ մենք չը լսեցինք մեր հայ հոգեհանգիստներէ: Նոյնպէս և ամբողջ մեծ պատի ժամանակ չը լսեցինք եկեղեցու բեմից ոչ մի քարոզ: Պատճառը յայտնի է. մենք ունենք ձոխապաճոյճ և նշաններով զարդարեալ քանաններ, բայց չունենք քարոզիչներ, չունենք հոգեւոր հովիւներ, որոնք կարողանալին կենդանի խօսքով բարոյապէս ազդել ծուխի վրայ, միմիայն քարոզով հանգիստականների սիրտը: Մենք չունենք քանաններ: Ի՞նչ եկեղեցական ծէսեր կատարելու դեռ քոստանպոլսիւն չէ, այդ խօսքի բուն իմաստով և մտքով»:

«Голосъ» լրագրում կարդում ենք որ մի ռուսահայտաւ հայ, գոկտոր բժշկութեան Բալանթարեան մեծ գիւտեր է անում Անգլիայում: Նա գտել է մի նոր միջոց արուեստական սառուց պատրաստելու, որ դիմանում է արեգակի ճառագայթներին: Անցեալ տարի բժշկական Բալանթարեան պատրաստեց այդ տեսակ սառուց անգլիական թագաւորանոց, Ռէլիի իշխանի կուրի համար Լոնդոնում և այնուհետեւ նա հրահանգեալ իր գիւտով: Բացի այդ գիւտից բեժկապտ Բալանթարեան միջոց գտաւ պահպանել ջրանցքների խողովակները սառչելուց, իսկ անցեալ տարի կատարեալագործեց գոյի լապտերները, այնպէս որ նրա գիւտի շնորհով գաղի բաց 300/0 աւելի լայն է տալիս, լապտերի մէջ գաղի նոյն քանակութիւնը գործածելով: Բալանթարեան երևանցի է և այդ քաղաքում իր սկզբնական ուսումը ստանալուց յետոյ վաթսուներորդ թեւականներում գնաց Անգլիա, որտեղ սկսեց ուսումնասիրել բժշկականութիւնը, Այդտեղ նա աւարտեց իր ուսումը բժշկութեան և խիրուրգիայի օգիտորի աստիճանը ստանալով: Ռուս լրագրի տեղեկութիւններին մենք մեր կողմից կարող ենք աւելացնել որ օգիտոր Բալանթարեան ազուրեցի է:

ՁԱՔԱՐԱՅԻՑ մեզ գրում են: «Ապրիլի 16-ին Բալաքան գիւղում, խնջոյքի ժամանակ գաշտչուով սպանեցին Ջաքաթայի վիճակի կոտորածի Սերաֆիմովիչին և երկրահայի Սաղաթովին: Սերաֆիմովիչի սպանողը կալանաւորված է»:

Նիկող.— Ի հարկէ զոյա հակադրութեան վրայ յոյս կապելով չէ կարելի թողուլ ամեն ինչ, որչափ ալ խորադէտ անուն հանած ըլլան թիւրքերը քաղաքականութեան մէջ, այդ է պատճառը որ հայերը իրենց յոյսը դրած են միայն Ռուսիայի և Անգլիայի վրայ:

Թրոթթըր.— Այո՛, Ռուսիան ձեզ շատ համակր քաղաքականութիւն ունի այժմ, ազդպէս չէ (փորձելով):

Նիկող.— Այո, ինչպէս և միշտ, բայց կարծեմ որ Անգլիան ալ շատ գոհ պիտի ըլլայ, որ Հայաստանի վերաբերմամբ իր բարբ քաղաքականութեան մէջ նա իրեն աջակից ունի Ռուսիան:

Թրոթթըր.— (ժպտելով).— Բայց ինձ հետ զիպուսացութիւն կընէք. բարեկամ, մինչդեռ իմ հարցմունքներս բոլորովին անանց ariere pensee-ի են:

Նիկող.— Ինչո՞ւ, ես ձեռ հետ նոյն անկեղծութեամբ կը խօսիմ, որ միայն չը վայելէ երկու զինուորականներու:

Թրոթթըր (խօսքի ձեռ փոխելով).— Ուր է ձեր բարեկամ Կամարականը, դեռ Վան է. Օրերը Միլլէրի փախուելը նշան չէ արդեօք որ Ռուսիան յիշուի սկսելու ձեռ կարեւորութիւն տալ Հայոց խնդրին:

Նիկող.— Հարկաւ, բայց նա միշտ և տունած հայերուն նոյն համարումը երբ ինքը եղած պատճառ 61-րդ յօդուածի:

Թրոթթըր.— Հաւատացե՛ք ինձ, ինչպէս օֆիցերին, որ ես միշտ աշխատած եմ համոզել իմ տէրութիւնը, որչափ կարելի է չուտով իրագործել 61-րդ յօդուածը:

Նիկող.— Այո, այդ յայտնի է Կ. Պոլսի թղթակցութիւններէն «Մշակ» լրագրի մէջ, որը ըստած էր թէ դուք Անգլիա ըսելը էք ուղարկեցե՛ք զիս Չինաստան, Ամերիկա, բայց ոչ Հայաստան, ուր երթալ կամալեմ, այնքան ապարդիւն խոստումներ տալով հայերուն:

Թրոթթըր.— a propos: Ինչ ուղղութիւն ունի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍ» ԼՐԱԳԻՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

«Մասիս» լրագրին գրում են երեանից հետեւեալը:

Էջմիածնի մէջ յայտնված զինուորական քաղաքագրութիւնները, Մանկունի եպիսկոպոսի ժանդարմական ընդունակութիւնը և նորա ցոյց տուած փայտակոծ հիւրընկալութիւնը Հայաստանից եկած մի ծերունի եպիսկոպոսին, հետաքրքիր են գուցէ ոչ պակաս ճաճկահայերի համար քան թէ մեզ Ռուսահայերիս: Առաջին հարցը, որ իւրաքանչիւր հայ առաջարկում է իրան այս տեղ, այն է թէ՛ ի՞նչ գաղտնիք է, որ Մանկունի եպիսկոպոսը բանեցնում է իր շրջանում նոյն իրաւունքը, որը գործ է ածում ամենէն բռնաւոր պաշտօնատարը... Այս գաղտնիքը մասամբ պարզեց մի քանի ամիս առաջ Թիֆլիսի հայ մամուլը, մասամբ էլ ինքը հայ հասարակութիւնը իմացաւ նորան զանազան մասնաւոր աղբիւրներէ: Բայց որովհետեւ այս մասին գեռ մինչև հիմայ ձեր լրագրութեան մէջ անյայտութիւն է տրեւ, վասն որոյ հարկաւոր եմ համարում լուսարանել ձեր ընթերցողներին առաջ այն ամենը, որի վրայ այսչափ զայրոյթով է խօսվում այժմ Ռուսահայերի մէջ: Բանը նորանուէն է, որ Ս. Լուսաւորչի տաճարի պատերի մէջ կատարվող այսչափ վրդովեցուցիչ արարքները, ազդը անուանաբար այդ բոլոր արարքները կատարվում են ոչ այնքան Կաթողիկոսի և նաեւ Մանկունու մեղքից, այլ Պետերբուրգից եկող հրահանգների շնորհիւ: Գուցէ ձեզ համար շատ զարմանալի երեւայ մի այսպիսի նորութիւն, բայց լսեցե՛ք մինչև վերջը և այն ժամանակ ամեն ինչ պարզ կը լինի ձեզ համար: Յայտնի է, որ քան տարիէ ի վեր ապրում են Պետերբուրգում երկու անբաժան բարեկամներ, որոնց մեր Ռուսահայ մամուլը մկրտել է «բուրմ» և

«Մշակ» լրագիրը, նա կարծեմ Անգլիայի կատաղի թշնամին է:

Նիկող.— Այո, բայց Պիկոնսֆիլդի Անգլիայի, այլ ոչ պ. Կատտոնի:

Թրոթթըր.— Իրան:

Նիկող.— Կարող էք հաւատալ նորա աշխատակցին, որ ձեզ հետ կը խօսի:

Թրոթթըր.— (տեղէն ցատկելով) Իրան, ուրեմն պէտք է ձեզմէ վաննալ (կատակով քիչ հեռու քաշուելով, իսկ յետոյ խօսակցին ձեռքը սեղմուելով), բայց խնդրեմ ըսե՛ք մեծ է «Մշակի» բանակը:

Նիկող.— Գրեթէ ամբողջ հայ երիտասարդութիւնը:

Թրոթթըր.— Ո՛հ, Ըսե՛ք ինքեմ, պ. Նիկողոսեան, ինչ կարծիք ունիք դուք տաճկահայոց պահանջներու վերաբերմամբ, միթէ հարկաւոր է Հայաստանի մէջ ուղարկութիւն դարձնել լոկ հայերու վիճակին վրայ, այլ ոչ և թիւրքերու և ուրիշ խաղաղ միակրկնականներու վրայ եւ, կամ միթէ միանգամայն հարկաւոր է հայերու անսահման տիրապետութեան տակ դնել թիւրքերն ու քիւրդերն, արձանարհելով այս բոլորի իրաւունքները:

Նիկող.— Տարակոյս չը կայ, որ միանգամայն հաւատար քաղաքական և հասարակային իրաւունքներին հարկաւոր է եւս բոլոր տարրերուն: Եւ կարծեմ որ, տալ բոլոր տարրերն ալ միայն այդ է, մանաւանդ երբ նոքա այնչափ վտանգ են իրենց մտաւոր ու բարոյական յատկութեանց ու առաւելութեանց վրայ, որ շատ լաւ գիտեն թէ հաւատար քաղաքական իրաւունքներ վայելելը կը նշանակէ բոլոր ապագան իրենց ձեռքը ունենալ:

Թրոթթըր.— Այո, բարոյովին ճիշտ է, ես ինքս միշտ նոյնն եմ քարոզած Անգլիայի, ցոյց տալով մանաւանդ Լորիս-Միկելոֆներու, Լազարէֆներու և Տէր-Ղուկասոֆներու վրայ, որոնք չեն կարող նկատուիլ իրր բացառութիւնք, այլ նոքա ար-

«վաշխառու» անուններով: Թէ ի՞նչ տեսակ մարդիկ են էջմիածնի այդ երկու զինուորացիները և ի՞նչ առիթով են նորա զինատարութիւն անում, թոյլ տուէ՞ք, որ ձեզ պատմեն:

Սոցանից քուրմն ասումը մի մարդ է, որի ծառայութիւնները Ռուսահայկերին այնչափ են եղել, որ նորա անձնական կրքերից զոհ է գնացել ազգի հանրածանօթ Նալբանդեանցը և նոյնպէս ո՛չ սակաւ տանգիլ են բարոյապէս երկու անուանի Հայ դրագմաներ՝ Նալբանդեանց և Միսնասարեանց: Յայտնի լինելով համայն Հայ հասարակութեան իր կործանիչ արհեստով «քուրմ» սակայն այնչափ սպառնալի է եղել իւրաքանչիւր Ռուսահայի համար, որ ոչ ոք չէ համարձակվել բացարձակապէս բողոքել նորա դէմ, մնաւ լանդ երբ նորա երկնիցի ազատ չէ եղել նոյն իսկ Ռուսահայ աւելի ազատամիտ օրագրութեան ներկայացուցիչը: Եւ նորա ամենքն էլ իրաւունք են ունեցել երկնից կրելու:

Բոլորովին այլ տիպ է Քուրմի աշակից Հայ վաշխառու կրկեսը: Քան տարի առաջ նա եկել է Պետերբուրգ և արգելուած թըղթախարի մէջ հարկւր հազար բուր մի գիշերուայ ընթացքում խարխուլութեամբ տանելով, միանգամից հարստանում է ու սկսում է վաճառականութեամբ պարապել: Եւ այդ վաճառահաշտութիւնը մինչև հիմայ կատարվում է հիտեակ կերպով.—մի կողմից նա շարունակում է թղթախարի մէջ քրէական միջոցներով հարստանալ, միւս կողմից նա պահում է Պետերբուրգում մի զբաղական (lombard), ուր տեղ-մեծաւ մեծ զբաղներով ստակ են վերցնում փոքր վաճառականներ, Ռուսահայ ծառայողներ, նոյնպէս և Հայ ուսանողը: Ռուսաստանի լոմբարների կանոնը այնպէս է, որ եթէ նշանակած ժամին և օրին զբաղ գնողը չը վճարէ իր պարտքը, այն ժամանակ որչափ էլ մեծ և թանկագին գրաւ լինի նորա թողածը, դարձեալ նա չէ կարող յետ առնել:

տաշապոնցին միայն իրենց մէջ ամիտութեամբ ազգային յատկանիշները:

Ն ի կ ո ղ. Բայց խնդիրը սորա մէջ է թէ ինչպէս ընելու է, որ Հայաստանի բոլոր մեծ թէ փոքրիկ ազգութիւններն ալ հաստատ իրաւունքներ ունենան:

Թ ռ օ թ թ ը ը.—Իմ կարծիքով իրանաւոր կացութեան պէս մի կացութիւն կարող է բուրբուրով յարմարիլ Հայաստանի ժողովուրդներու պայմաններուն: (Այսպէսով կիմացուի վերջնականապէս ա. Թրօթթթի հայութեանը): Բայց ահա, երբ այս տխուր մարդիկ (թիւրքերը) չեն ուզեր ոչ իրենց օգուտը հասկնալ ու ոչ մեր խորհուրդը լսել, մնաւաւոր կը տեսնեմ որ նորա խորտակելով իրենց շահերը պիտի խորտակեն մեր շահերը ևս:

Ն ի կ ո ղ. (Ինքնաբաւական չնշտեր ա. Թրօթթթի խոստովանութիւնն և հանդիմանքն):

Թ ռ օ թ թ ը ը.—Բայց ըսէք ինքեմ, ինչու հա՛յեր ինձի՞ք անբաւական պէս կերանալ:

Ն ի կ ո ղ.—Ես զայդ ձեզով զարմանող կը լսեմ, ընդհանրապէս Հայ լրագրողները ձեր անձնաւորութեան վրայ միշտ շատ մեծ համակրութեամբ կը խօսեն:

Այսուհետեւ խօսակցութիւնը կը դառնայ Ռուսիոյ նոր քաղաքականութեան, ուսում մասնուի և կովկասի հայերու վրայ, այս վերջիններու վրայ մասնաւոր ա. Թրօթթթի մեծ հետաքրքրութիւն կը յայտնի:

Պ. Թրօթթթը կը հրաւիրէ ա. Նիկողոսեան միապետ ընել համաճաշիլը, բայց սա չնորհալարութիւններն յայտնելով կը մնկնի:

Պ. Թրօթթթը փոխադարձ այցելութեան կերթայ ա. Նիկողոսեանի, և այսուհետեւ եղած ուրիշ խօսակցութեանց վրայ աւելորդ է գրելն. մեր առաջ բերած կտորներն կը տեսնուի ա. Թրօթթթի համոզմաններն հայոց նկատմամբ: Հայաստանի բարեկարգութեան մասին, և այն

իր ստացուածը, վասն որոյ իւրաքանչիւր օր ամեն մէկ լոմբարդում կարելի է տեսնել հիտեակ սրտաշարժ տեսարաններ: Ուսանողի մէկը մի քանի ժամ զբաղեց ժամանակը անցուցած լինելով, ի զուր աղաչում է կըրկնապատիկը առնել գէթ իր մօր կամ քրոջ տէր այր կին լաց է լինում իրան ցրտից պաշտպանող միակ մեւշտակից ոչինչ գնով գրկվելու համար, և այլ այսպիսի դժոխային տեսարաններ: Այսպիսի տմարդի ճանապարհով հարստութիւն գիշերու ամօթը ազգի առաջ ծածկելու համար, մեր Հայ կրեոսը մի լաւ միջոց է գտել. ձայն տալով լաւագուց մէջ թէ նա իր բոլոր ունեւածով պիտի բաց անէ Հայաստանի մէջ մի համայնարան (?) և նոյնպէս հազար ու մէկ ազգագուս շէնքեր: Ռուսահայերը որչափ էլ զգուած լինէին իրանց ազգակցի ստոր կանոններով, դարձեալ այնչափ սիրում էին Հայաստանի բազմաւորութիւնը, որ ներում էին վաշխառուի յանցանքը նորա բարի ու վսեմ դիտարութեան համար: Բայց, աւագ, շատ չի անցաւ և այդ ազգային դիտարութեան մէջ ևս բռնկեց նորա խարխուլութիւնը. երբ անցեալ տարի յայտնեց Հայաստանի մէջ սոսկալի սովը, բոլոր ազգը տակն իր աչքերը Հայ կրեոսի վրայ, աւմեայն իրաւամբ ենթադրելով թէ տեսնելով Հայրենիքը անգուցիւ փութ, կրեոսը Հայաստանի լուսաւորութեան համար նշանակած (զոնէ իրան տակով) գումարի գոնէ մի փոքրագոյն մասը կը նուիրէ սովից օգուտին: Այս, յանկարծ ձայն տարածվեց, թէ ահա այս ինչ պարոնը այնչափ հազար բուր նուիրեց: Թէպէտ նորա համար այդ մի ոչինչ գումար էր, բայց դարձեալ շատ բան էր եթէ ճշմարտանար, բայց դժբաղդաբար դիտմամբ ձայն գցած գումարի միայն տասնէրորդ մասը տրվեցաւ սովից, հրատարակելով գրեթէ բոլոր Հայ և Ռուս մամուլին մէջ, որպէս մեծ պարծանք: Եւ, ի՞նչ ա-

կարեւորութիւնը դու կընծայեն ուսումնաւոր, և կարելի ըսել որ ա. Թրօթթթի համոզմանները կրնանք քիչ չաւ իր կառավարութեան կարծիքները նկատուի.—Պ. Թրօթթթի այս անգամ Ա. Պոլիս գալուս բաւական տարբերութիւն կը տեսնուի Պիկոնֆիլդի և Ալաբամիի հիւպատոսին մէջ:

Պատրիարքի հրաժարականի խնդիրն դեռ աւելի մի՞նչ է, և թէպէտ մեր թիւրքերը երկար չեն գրեւ այս նիւթին վրայ, բայց յայտնի կըլլայ որ Պատրիարքը ինչպէս երկու ամիս առաջ ըրաւ նոյն և այժմ բայց աւելի քողարկեալ կերպով մը, իւր հրաժարականով բողոք մը տուած է Վրան հայոց նկատմամբ ի գործ դրած խիստ միջոցներուն դէմ: Արեւմտ թիւրքերը գիտակի մը ներքե կը ջանային ծածկել իրենց մաքրակեցութիւնները: Օրինաց հակառակ կղերականները կը ձերբակալեն. եղբիւ կախողութեան գիտաւորական հակոռութեան ձերբեք Արեւմտեան թիւրքերը հանած են ի Ա. Պոլիս, վասն զի երբ մարդը հայ գիւղացոց շահերը կը պաշտպանէ, զիչին բանիւր համար հայ տաղաքիչներ խտուր կը տառապին, ինչպէս Տեսեսեան զոր չարաշար նեղեցին և այժմ հիւանդացած բանտի հիւանդանոցն տարեր, են ինչ է յանցանքը. երբ դարան մը հրատարակել է յորում կը դառնուի Ա. Պոլսոյ երգում երգերն: Գափափեան նորէն կը բանտարկեն, վասն զի գրաքննիչի հաւանութեամբ և պատրիարքարանի յանձնարարութեամբ հայոց սահմանադրութեան փրանսիէն թարգմանութիւնը տպած ժամանակ վերադարձը Constitution armenienne, սահմանադրութիւն հայոց դրած է. ինչու Statuts organiques չէ դրած: Կառավարութիւնն ոչ մի դրամ չը տրուի մեր ներքին պետքերն հողաւոր համար, հետեւեալ հայոց հողաւորութեամբ այդ պետքերն կը մատակարարուին: Եւ ահա Սալիմ բաշա հրաման կը խրկէ որ սովից փողովը, ազգային հիւանդա-

րած, զօռով խօ չէր կարելի բան առնել: Բայց այս տեղ ևս ի՞նչ սոսկալի գեղծում յայտնեց. մի քանի ամից յետ երեսոց, որ Հայ կրեոսի տուած փոքր գումարն ևս ոչ թէ իրան նուիրածն է, այլ Բեսարաբիայ խորթացած Հայերի մէջ հաւաքած մի գումար է, որը չիմանալով ինչպէս հասցնել իր տեղը, բարեսէր Հայերը ուղարկել են այդ գումարը Պետերբուրգի կրեոսին, որ նա հասցնէ ուր հարկն է: Թիֆլիսի Մ շ ա կ լ լ րաւ գիրը իմանալով այդ անօրինակ գեղծումը, սարսափելի աղմուկ բարձրացրեց ամեն տեսակ յանդիմանքներ թափելով խաբէբայ և կեղծ հայրենասէրի երեսին, բայց ոչ մի տեղից մի հիւքում չը ստացաւ: Այս փոքրիկ նախնական ծանօթութիւններից յետ՝ վերջիշեալ երկու անձինքների մասին, ասեմ այժմ նոցա էջմիածնում անող զինատարութեան հանգամանքները:

Կարծեմ 1867 թուին էր որ էջմիածնի այժմեան կաթողիկոսը եկաւ Պետերբուրգ հանգուցեալ կայսեր այցելութիւն: Վերջիշեալ երկու պարոնները օգուտ քաղելով կաթողիկոսի պարզամտութիւնից, շրջապատում են նորան և համոզում են, որ էջմիածնի աթոռի գանձարանում գուր տեղ առանց շահեցողութեան փողերը չը պահելու համար, յանձնէ կաթողիկոսը այդ փողերը հարուստ Հայ կրեոսին, որը շահեցնելով իրան տուած մեծ գումարը, կարող է հասցնել նորան ամենամեծ թուանշանին: Խաբէրալութիւնը այստեղ ևս յաջողվում է ամենափառաւոր կերպով ու աթոռի բոլոր ունեցածը ընկնելով կրեոսի լոմբարը, թողնում է կաթողիկոսին ամենաօրինաւոր գերութեան մէջ երկու խաբախ Հայ պարոնների ձեռքին: Եւ ի՞նչ եւք կայ այդ գերութիւնից ազատվելու համար. եթէ էջմիածնի կամեայ հրապարակ հանել այդ բանը, այն ժամանակ ազգը չարաշար կը դատապարտէ նորան. եթէ ծածկէ, ազգը շարունակում է ամենայն յամառութեամբ հաշիւ պահանջել. մնում է միայն մի եւք՝

նոցը, երբուտեղեմայ պարտուց յանձնաժողովը նուիրատուներ չը հանեն ի հրապարակ, անշուշտ կարգը միւս ընկերութեանց կուգայ, բայց պատրիարքն ալ ազգու կերպով կը մերժէ այդ հրամանի գործադրութիւնը: Տուրքերու հաւաքումը անխնայ կերպով կը կատարուի, ոչ միայն սովալ ժողովրդոց ապառիկ մնացած տուրքերը կը հաւաքեն, այլ գալիք տարիներուն ալ պահանջելու կենեն: Քիւրդերը անկեր քաշաբութիւն կը գտնեն, որ մէկն ըսենք: Այս ամէնը այնքան բնական, կերան որ Սալիմ հարկ մը, պէտք մը չը տեսնել անախելու և գանձեք քողարկելու:—Ամեն տեսակ նկատողութիւններ անշուշտ տեսնուելով Ազգ. ժողովը միաձայն հրաժարական և վերադարձ իւր վստահութեան քուէով պիտի պատուէ Պատրիարքը և այսու աւելի հաստատ կերպով գործելու առիթ պիտի ընծայէ նմա: Ժողովոյ դիւանաց ատենապետները արդէն այս մտքով որոշում տուին, և Զատիկին երբ ազգային պաշտօնական մարմինները ներկայացան սրբազանիք, Ազգ. ժողովոյ նախագահն ալ Սալիմ—գուլի ազգային կարծեաց ճշմարիտ թարգմանը հանդիսացաւ Պատրիարքի մօտ, երբ հրաժարականի անընդունելի ըլլաւուն պատճառները բացատրեց, մանաւանդ որ այս միջոցին Ներսէսի գործող գլուխը գտնուին անհրաժեշտ է: Հրապարակութեան օրակարգին մէջ ըսաւ ա. Մերիթիւրի, հայկական խնդրոյն նախադասներն իրենց լուծում առին, շրջադրութիւն Օգոստոսեան կայսեր սուլման Համախանի սղջմիտ հայրենասիրութեան. այժմ ալ հայկական ի հարկէ պիտի առնու իւր լուծումն, որուն աւելի սիրով պիտի դրաղին անշուշտ Օգոստոսեան կայսրն և իւր բարձրագոյնը: Նախարարներն, մինչդեռ հայոց իր ձեռքը նշանակեց միակ չունին, որ ամենամեծ կողորոշութեան շահուց և երկրին ամբողջութեան սկզբնական անհաշտ անհամաձայն լինին: Եւ թերեւ

ազգի վերաբերմամբ միշտ լուել, իսկ վերջիշեալ երկու պարոններն հետ մի կերպ կառավարվել, իր փողը գոնէ գլխովին չը կորցնելու համար: Իսկ այսպիսի դրութիւնից այն է առաջ եկել, որ էջմիածնի բոլոր կառավարչութիւնը ոտով ու գլխով ընկել է ք ու ը մի և վ ա շ խ ա ու ը ի ձեռքը, որոնք ատուելով համայն Ռուսահայերից, սակայն շարունակում են կառավարել էջմիածնի, նոյն ժամանակ գանազան խաբէբայական խոստովանելով Ներսէս պատուրիարքին և ճաճկահայերին կարողանում են բանեցնել իրանց ազգեցութիւնը և ձեր վրա Ահա՛ այսպիսի դրութեան մէջ է էջմիածնի կառավարութիւնը, որի վրա ամեն կողմից յարձակվում են, բայց օր քան զօր ամեն բան գնալով վատանալու վրա է. . .

Ահա այն բանալին, որով դուք միշտ կաւող էք թափանցել էջմիածնում կատարվող բոլոր գաղանի խտրիզաների և անկարգութիւնների մէջ, ում վերաբերմամբ էլ նոքա յայտնվելու լինին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ե Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ն Ի 8

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 ապրիլի: Պետական բանկի 50% տոմսով առաջին շրջանի արժէ 97 ռ. 50 կ., երկրորդ 94 ռ. 50 կ., երրորդ 95 ռ., չորրորդ 95 ռ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսով արժէ 224 ռ. 50 կ., երկրորդ 218 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսով արժէ 93 ռ. 50 կ., երկրորդ 93 ռ. 50 կ., երրորդ 93 ռ. 50 կ., ոսկի 7 ռ. 97 կ.: Ռուսաց 1 ռուբլ լոնդոնի վրա արժէ 24,62 1/2 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 210 մարկ 50 պֆ., ֆարիզի վրա արժէ 260 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի արամալ գրութիւնը հանդարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

այս այն միակ խնդիրն է, որ երկրին իրական շահերը պաշտպանելու նպատակին կը յանգիւն.—Պ. Մերիթիւրի խոստովանելով ճշմարտութիւն մը ըսած է միայն, երբ 61-րդ յօդուածի գործադրութիւնը երկրին շահերը պաշտպանելու միակ միջոցը կը գտնէ, բայց երբ կը յուսայ թէ այդ գործադրութիւնը փութացնելու ժամը հասած է, գուցէ սխալած ըլլայ: Բ. Կուսուր Չէրնոգորիայի և յունական հարցին աւելի անմարտելի կը գտնէ՝ այդ յօդուածը. երկնուր ներ ունիւր որ յետագոյնը շարունակէ: Յունական խնդիրը իւր լուծումը գտնելու շատ մօտ չերեար. թունուղի հարց մը կըլլէ, Ալաբամիայի ինքնօրինութիւն կը պահանջէ, և ասոնք ամենքը զէնքով կը խօսեն և ոչ թէ լաւով. եթէ այս խնդիրները կարգադրուին իսկ, կրուի թէ ատենցմէ անմիջապէս վերջը թիւրքից գանձային բարեկարգութիւնը առաջին խնդիր պիտի ըլլայ: Ինչ անլուծանելի խնդիր.—Անշուշտ կը փափագվեք որ այդ գանձային խնդիրը չուստով կարգի մտնէ, բայց երկրին անտեսադիտական արդի մի՞նչ և այդ երկիրը կառավարողներն ընդունակութիւնը ի նկատի առնելով կաւելի չէ յուսալ որ այսպիսի հակա գործ մը գրուի ելլէ: Թիւրքերը իրենք ալ չեն հաւատար, բայց գանձուց բարեկարգութեան խնդիրը առաջ նետելով կրնան երկու երեք տարի շահիլ.—Թէ տեղացի ժողովաւորը և թէ երկրագլուց ամեն խնդրէ աւելի այս գանձային խնդրին կարեւորութիւն կուտան, վասն զի օսմանեան արժէթով թուելով ամեն սնտուկներ լի են և բնական է որ Ասիոյ խորշը գտնուող ժողովուրդի մը վրայ մտածելէ աւելի իրենց քանակին կարեւորութիւն տան:

Թէպէտ կիրակի, այլ օրն տարածմամբ է. շարունակութիւնը յաջորդին:

Հայկակ

Յ Ե Յ Տ Ե Ր Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Արդէն վաճառվում է

ԻՆՉ ԲԱՆ Է

ԺԱՆՏԱԽՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխի տկարութիւններից: Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժշկ Գ. Ա. Իլինսկոյ:

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրանց Գինն է 15 կոպ. 100-նորով գնողներին զիջումն կը լինի: Մեր հասցեն՝ Вь Эривань

А. Гуламирянцу

5—5 (2)

Կ. Կ. Չ. ՊՈՊՈՎ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ ԿՈՂՄԻՅ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ: Ամենակարճ ժամանակամիջոցում մենք կը բանանք Թիֆլիսի մէջ մեր առևտրական տան թէյի վաճառումն մեծ քանակութեամբ և մաս մաս: Խանութը կը լինի Գոթովնսկայա փողոցի վրա Միրիմանովի տանը: Խանութը կը ստանայ ԱՄԵՆԱԼԱԻ ԹԵՅ, որ կը ստանա կը լինի Մոսկովայի մեր գլխաւոր խանութի մէջ մեր անձնական ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ:

144 Արծրունու դարէկա 144
ամենակարճ ժամանակամիջոցում
մենք կը բանանք Թիֆլիսի մէջ

Въ Редакціи газеты
«МШАРЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մինչև այժմ չեղած **ԵԿԵՆՔԻ ԻՒՂ ԲԺԻՇԿ ԸՄԻԳՏԻ**, որ կատարելագործված է բժշկի ՄԱՎՐԻՍԻ ԴԻԶԵՏԻ: Ընդգնացում է ամեն տեսակ խոլերայի, եթէ նա բնական չէ: ԵՐԵՒՐՈՒՐ, բուսանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՇԻՇ այդ իւրից, մանրամասն խՐՏՆԵՐՈՎ, գործածութեան մասին: ԵՂԻՂԻ կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԳԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ և ԵԿԵՆՔԻ ՎԵՆՑԵԼ 3, Կազանից ալ փողոց № 3: 51—52

Չը նայելով մարտիկի աւելանալուն ապրանքները առաջիկայ գնելով կը ծախվին. **ԿՕՆԳՕԹԵՅ** 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ռ. 20 կ. և 1 ռ. 40 կ., հիւնալի **ԿԱՅՍԱՌԻ** 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ ԹԵՅ** 2 ռ. ստանց թղթի: Անգլիական լեզվովներ 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20 ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱՐԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, Հանսի **ԿՈՂՊԵՐՆԵՐԸ**, Տուրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և Էկտորալ կախաշօխարի ծախելու համար, որոնք վարկի հանդիսի ժամանակ ոսկէ մեզալ ստացան: **ՀՈՏԱԻՏ ԹԵՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ** 1 ռ. 65 կ. և ամենալաւ 2 ռ. 30 կ.: Վաճառականներին օգտուէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ռ., կոնֆիկտներ հազի գէտ 60 կ. Փոխորդ: 66—100

Վերականգնեցող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող: Գինը 2 ռ. շիշը: **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ռ. 49 կոպ.: **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ:



ՄԻ և նոյն տեղը **ԻՒՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնող համար, 1 ռ. ամենը վրձին գլխաշօխարի գէտ: **ՏՈՒՍԻՏԻ ՍԱՊՈՆ** և հատուէտ ջրեր և այլն: 62—100

Տպագրութեան համար պատրաստվում է մեր ժողովածուի ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ: Այս հրատարակութիւնը բաղկացած կը լինի շատ հատորներից, որոնք հետզհետէ 'ի լոյս կընծայվին. նոքա պէտք է բովանդակ են իրանց մէջ հայ ժողովրդեան բերանացի աւանդութիւնները.— ՀԷՔԻԱՅԵՐ. ԺՈՂՈՎՐԻԱԿԱՆ ԵՐԳԵՐ. ԲԱՌԵՐ ԵՒ ՈՃԵՐ. ԱՌԱՅՆԵՐ. ԱՌԱԿՆԵՐ. ԱՆԵԾՔՆԵՐ. ՕՐՀՆԱՆՔՆԵՐ. ԵՐԻՌԻՄՆԵՐ. ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ. ՇՈՒՏ-ԱՍՏՆՈՒԿՆԵՐ. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ և ՅԱՐԵՐԳԵՐ:

Որոյ համար լի յուսով դիմում ենք մեր ազգայնաց, ընդհանուր ուժով օգնելու մեզ, ուղարկելով պատշաճաւոր նիւթեր, բուն տեղական բարբառով: Աղաղակներին պատիւ կունենանք յիշել, որպէս հրատարակութեան աշխատակիցներ, ուղարկելով նոցա մի մի տեսակ բոլոր հատորներից:

Մեր հասցեն՝
Тифлисъ. Въ частную лечебницу, доктору Баграту Навасартянцу.

ՄԻՆՉԵՒ 1831 ԹՈՒԱԿԱՆԻԱՊՐԻԼԻ ՎԵՐՉԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՅ ԳՐԲԵՐԸ:

- 1) Երկու մանրավէպ. Ալֆոնս Դոդէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
 - 2) Պոլսեան ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան: 20 կ.
 - 3) Պոլսեայ ժամեր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ: Ն. Տ. Աւետիքեան: 25 կ.
 - 4) Ճանապարհորդութիւն Ղարաբաղում, Ա. ցախիցի: 30 կ.
 - 5) Ծաղիկ և ծաղկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանցի: 15 կ.
 - 6) Քնար խօսնակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան: 50 կ.
- Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կոպէկ: Առանձին մէկի համար բաժանորդագրութիւն չէ ընդունվում, բայց «Քնար խօսնակ»-ը որի համար առանձին կարելի է ստորագրել և մնացեալ հինգը առանձին: Հրատարակիչ Տիգրան Յ. Նազարեան:

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մազաղինները ստանում է թէյ ուղղակի պատնաւորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականաւոր է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 Փունտ թէյ առաջին տեսակի, կախա և շօխաղ-Փրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէյ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, լեզվովներ, կողպէքներ, մատուցարաններ, աւաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թմբեր, գուլպաներ, կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակնիտօշներ, կախեկօր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձևով: Համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէյ ուրիշ տեղ: Արծրունու գաղէրէում: 100—92

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՃԵՃԻՆ ԼԵՔՆԱՆԵՐ 1 ռ., ԲԱՃԱԿՆԵՐ 12 կ., ՋՐԱՄԱՆՆԵՐ 50 կ., հրացաններ 20—100 ռ., ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ 5 կ. մինչև 5 ռ., ՄԱՃԱԿԱՆՆԵՐ 5—50 ռ., ժիլաններ 75 կ., վարտիկ-

ներ 4 ռ., ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ 4 ռ. տղամարդկանց 14 ռ., ԳԼԽԱՐԿՆԵՐ 1 ռուբլ, մակնիտօշներ 6 ռ., հին պորտվէյն և խրեւ 1 ռ. 20 կ. շիշը, կոնիակ առաջին տեսակի 1 ռ. 75 կ., ՊԵՂՈՒԼԻ 50 կ.: թէյամաններ 25 կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅ 1 ռ. 40 կ. առանց թղթի: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ԱՐԺՄՆԵՐ շատ էժան: 6—15

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ «ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱՂԸ»
անունով գիրքը, որ պարունակում է իր մէջ 90 դեռ լոյս չը տեսած բանաստեղծութիւններ:
Օտարաբաղաքացիք կանխիկ մէկ բուբ ուղարկելով, գինում են ուղղակի հեղինակին հետեւալ հասցեով:
«Чрезъ Просковейское Почтовое отделение въ городъ Святаго-Креста (Ставропольск. губ.). Учителю Семену Сафарянцу.»
Ռուսոյ Ամերիկայի տաւարական մագաղինում, ծախվում է, Աւստրիայի րիպի գիրանիք (խօսանք) հարիւր հատն 55 ռուբլիով: Գլորցովայա փողոց գաղէրէյ Արծրունի: 6—10